

Տնօրենների խորհուրդ

Վահրամ Պետրոսյան



Խորհրդի նախագահ

«Հայաստոմ» ԳՀԻ ՓԲԸ
գլխավոր տնօրեն

Ծննդյան տարեթիվ - 18 մարտի 1954թ.

Կրթություն

1972-1977թթ. ինժեներ-ջերմաէներգետիկ, «Ատոմային էլեկտրակայաններ և տեղակայումներ» մասնագիտությամբ, Երևանի Կ. Մարքսի անվ. Պոլիտեխնիկական ինստիտուտ (ներկայումս՝ ՀԱՊՀ)

1981-1985թթ. ասպիրանտ, Մոսկվայի Էներգետիկական Ինստիտուտ, Ատոմային էլեկտրակայանների ամբիոն, ք. Մոսկվա

Աշխատանքային գործունեություն

2002թ. առ այսօր - «Ատոմային էլեկտրակայանների շահագործման հայկական գիտահետազոտական ինստիտուտ» (կրճատ «Հայաստոմ» ԳՀԻ) ՓԲԸ գլխավոր տնօրեն, Միջուկային անվտանգության միջազգային կենտրոնի ղեկավար

1991-2002թթ. «Հայաստոմ» ԳՀԻ ՓԲԸ գիտական գծով տնօրեն

1985-1991թթ. «Ատոմային էլեկտրակայանների շահագործման համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երևանի մասնաճյուղ» (այժմ «Հայաստոմ» ԳՀԻ ՓԲԸ), ավագ գիտաշխատող, լաբորատորիայի պետ

1977-1981թթ. ԱԷԿ ՀԳՀԻ Երևանի մասնաճյուղ (այժմ «Հայաստոմ» ԳՀԻ ՓԲԸ) երիտասարդ մասնագետ - ինժեներ, կրտսեր գիտաշխատող

1996թ. առ այսօր, համատեղությամբ, ՀԱՊՀ դասախոս-պրոֆեսոր

1999թ. առ այսօր, համատեղությամբ, Երևանի Պետական Համալսարան, դասախոս-պրոֆեսոր


Այլ տվյալներ

2007թ. Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարան – «Միջուկային Էներգետիկական կայանքներ, ներառյալ նախագծում, շահագործում և շահագործումից դուրս բերում» մասնագիտությամբ:

«Անանիա Շիրակացու» մեդալ - 2011թ., «ՀՀ Վարչապետի Շնորհակալագիր» - 2003թ., «ԱՊՀ երկրների վաստակավոր Էներգետիկ» - 2003թ., Հայաստանի Ճարտարագիտական Ակադեմիայի «Ոսկե Մեդալ» - 2008թ., «Ռուսաստանի միջուկային բնագավառի 70-ամյակ»-ի մեդալ - 2015թ.

2016թ. առ այսօր հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրենների խորհրդի նախագահ

Արտակ Ալբերտյան



Խորհրդի անդամ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության պետ

Ծննդյան տարեթիվ - 26 փետրվարի 1974թ.

Կրթություն

Ավարտել է Երևանի Պետական Ժողովրդական տնտեսության ինստիտուտի կառավարում և տնտեսական կապեր ֆակուլտետի «Աշխատանքի էկոնոմիկա և սոցիոլոգիա» բաժինը: Ունի տնտեսագետի որակավորում

Աշխատանքային փորձ

1998թ. աշխատանքի է անցել ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում՝ որպես առաջատար մասնագետ

2000թ.՝ որպես գլխավոր մասնագետ

2002թ. նշանակվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության ճյուղային տնտեսական ծրագրերի վարչության արդյունաբերության, տրանսպորտի և կապի ծրագրերի բաժնի պետի տեղակալ

2005թ. աշխատել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում՝ որպես հանրային ծառայությունների ոլորտների ծրագրերի վարչության վառելիքաէներգետիկ համալիրի ծրագրերի բաժնի պետ

2011թ. նշանակվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության արտադրական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության վառելիքաէներգետիկ համալիրի և տնտեսության արտադրական այլ ոլորտների բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

2015թ. նշանակվել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության էներգետիկայի և տնտեսության այլ ոլորտներում բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

2020թ. նշանակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ֆինանսական, հաշվապահական հաշվառման և համայնքային բյուջեների վարչության պետ-գլխավոր հաշվապահ

Այլ տվյալներ

2006թ. հանդիսանում է «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «ԲԷՑ» ՓԲԸ, «ՀԱԷԿ» ՓԲԸ խորհրդի անդամ, վարկային ծրագրերի կառավարման խորհուրդի անդամ

2014թ. առ այսօր հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ

Սերգեյ Մինասյան



Խորհրդի անդամ

ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի
նախագահ

Ծննդյան տարեթիվ – 13 նոյեմբերի 1949 թվական

Կրթություն

1966-1972թթ. – Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, ճարտարագետ-ջերմաէներգետիկ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշխատանքային փորձ

1970-1980թթ. - Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «ՋԷԿ և ԱԷԿ» ամբիոնում լաբորանտ, ավագ լաբորանտ, լաբորատորիայի վարիչ, ավագ դասախոս

1986-2003թթ. - ամբիոնի դոցենտ

2003-2014թթ. – Ջերմաէներգետիկայի և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի պրոֆեսոր

2014թ. մինչ օրս – «Էկոնոմիկայի կառավարումը էներգետիկայի ոլորտում» ամբիոնի վարիչ

1980-1991թթ. – Ա. Թամանյանի անվան շինարարական քոլեջի փոխտնօրեն ուսումնական գծով

1991-1996թթ. – ԽՍՀՄ էներգետիկայի և էլեկտրաֆիկացիայի նախարարության բնապահպանական խնդիրների գծով ձեռնարկության հարավային բաժանմունքի տնօրեն

1996-1998թթ. - ՀՀ նախագահի խորհրդականի գլխավոր մասնագետ

1998թ. – Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի էներգետիկայում բնապահպանական խնդիրների ձեռնարկության տնօրեն

1998-1999թ. – ՌԽՍՀՖ «ԷՃՏ Ռոսսի»-ի «Էներգետիկայում բնապահպանական խնդիրների գիտահետազոտական ինստիտուտ» ԲԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ գիտական գծով

1999-2000թթ - ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության և գիտատեխնիկական քաղաքականության վարչության պետ

2000-2001թթ. – «ՀայԲուսգազարդ» ՓԲԸ կառավարման նախագահի խորհրդական

2001-2002թթ. – գլխավոր խորհրդական

2002-2010թթ. - ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար

2010-2014թթ. - ՀՀ կրթության և գիտության նախարարի գլխավոր խորհրդական

2014-2015թթ. - ՀՀ քաղաքաշինության նախարարի գլխավոր խորհրդական

2015-2021թթ. - «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ գլխավոր տնօրեն

2021թ. առ այսօր - «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ գլխավոր տնօրենի խորհրդական

Այլ տվյալներ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի պրոֆեսոր, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի նախագահ, Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի փոխնախագահ

2017թ. առ այսօր հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ

Ամալյա Սարիբեկյան



Խորհրդի անդամ

ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի
պրոֆեսոր

Կրթություն

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, ինժեներ-ջերմաէներգետիկ

Աշխատանքային գործունեություն

1977-1982թթ. – «Ատոմային էլեկտրակայանների շահագործման համամիութենական ԳՀԻ»
Երևանի մասնաճյուղ, միջուկային ռեակտորի լաբորատորիա, ինժեներ

1983-1992թթ. – Պետպլանին կից Տնտեսագիտության և պլանավորման ԳՀԻ, տնտեսագետ

1992-1996թթ. – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, արտաքին առևտրի բաժին, գլխավոր
մասնագետ

1996-1997թթ. – ՀՀ կառավարություն, վարչապետի օգնական

1997-1998թթ. – ՀՀ սեփականաշնորհման և օտարերկրյա ներդրումների նախարարություն,
նախարարի խորհրդական

1999-2000թթ. – ՀՀ Նախագահի աշխատակազմ, տնտեսագիտական վարչության խորհրդատու

2000-2001թթ. – ՀՀ արժեթղթերի հանձնաժողով, հանձնաժողովի անդամ

2001-2005թթ. – ՀՀ արժեթղթերի հանձնաժողով, նախագահի տեղակալ

2005-2010թթ. – ՀՀ կենտրոնական բանկ, խորհրդի անդամ

2010թ. առ այսօր – Երևանի պետական համալսարան, տնտեսագիտական ֆակուլտետ,
գործարարության և կառավարման ամբիոն, պրոֆեսոր

2017թ. առ այսօր հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ

Արամ Խաչատրյան



Խորհրդի անդամ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
Իրավաբանական վարչության պետ

Ծննդյան տարեթիվ – 1992 թվական

Կրթություն

2009-2013թթ. - Գավառի պետական համալսարան, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ, բակալավրիատ

2011-2013թթ. - Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, էկոնոմիկայի և իրավունքի ինստիտուտ, իրավագիտություն մասնագիտությամբ, իրավագետի դիպլոմավորված մասնագետի որակավորում

2013-2016թթ. – ՀՀ պետական կառավարման ակադեմիա Հանրային իրավունք, ասպիրանտուրա

Աշխատանքային փորձ

2013-2014 թթ. – Գավառի «28-ՇՄՇ» ԲԲԸ-ի իրավաբանական բաժնի պետ

2014-2017թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալի օգնական

2017-2018թթ. - ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի հյուսիս-արևելյան տարածքային կենտրոնի ղեկավարի տեղակալ

2018-2019թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ

2019-2020թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի վարիչ

2020-2021թթ. - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան

2021 թվականի օգոստոսից մինչև դեկտեմբերի 15-ը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական

2021 թվականի դեկտեմբերի 15-ից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ

Այլ տվյալներ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Մեկ մենագրության և մեկ տասնյակից ավելի գիտական աշխատությունների հեղինակ

2021թ. առ այսօր հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ

Էդուարդ Մարտիրոսյան



Խորհրդի անդամ

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ծննդյան տարեթիվ – 22 հունիսի 1974թ.

Կրթություն

1991-1996թթ. – Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Տրանսպորտային ֆակուլտետ

Աշխատանքային փորձ

1998թ. սեպտեմբերից մինչև 2020թ. հունիսը ծառայել է ՀՀ ազգային անվտանգության մարմիններում՝ զբաղեցնելով կրտսեր օպերիվազորից մինչև ՀՀ ԱԱԾ տնօրենի պաշտոնները

2020 թվականի օգոստոսի 11-ին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով նշանակվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2021 թվականի փետրվարի 16-ին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով նշանակվել է «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն

2020թ. առ այսօր հանդիսանում է «ՀԱԷԿ» ՓԲԸ տնօրենների խորհրդի անդամ